

ԲՆԻԿ ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԵՐ «ՀԱԳՈՒՄՏ»  
ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏՈՒՄ\*

ԼՈՒՍԻՆԵ ՂԱՄՈՅԱՆ

Բանալի բառեր՝ Հագուստ, իմաստային դաշտ, բնիկ հայերեն բառեր, հնդեվրոպական մայր լեզու, արմատ:

Նախաբան

Հնդեվրոպական նախալեզվից առանձնացած հայերենի բառապաշարի միջուկը կազմում են հնդեվրոպական միասնության շրջանից ժառանգված բառերը<sup>1</sup>, որոնց «թիվը որոշ չափով լրացնում են հայերեն բարբառներում պահպանված գաղաղական այն բառերը, որոնք հնդեվրոպական ծագում ունեն կամ առնչվում են հնդեվրոպական ցեղակից լեզուներին: ... Հետևաբար, ինչպես գրաբարյան հուշարձաններով վկայած, այնպես էլ բարբառներում պահպանված հնդեվրոպական ծագում ունեցող բառարմատների ընդհանուր թիվը այդ լրացումներով անցնում է 1200-ից»<sup>2</sup>:

Ուսումնասիրության նպատակն է՝ քննել «Հագուստ»<sup>3</sup> իմաստային դաշտի բնիկ հայերեն բառերը, որոնցից ժամանակի ընթացքում կազմվել են բազմաթիվ ածանցավոր ու բարդ բառեր: Նման միավորների բառաքննական և ստուգաբանական վերլուծությունը կարևոր է հայերենի բառապաշարի ընդհանուր պատմության տեսակետից, քանի որ բնիկ հայերեն բառերը կազմում են հայոց լեզվի բառապաշարի հիմնաշերտը:

«Հագուստ» ընդհանրական հասկացություն և «հագնելու գործողություն» արտահայտող բնիկ հայերեն բառեր

Հր. Աճառյանն առանձնացնում է բնիկ հայերեն բառերի 22 իմաստային դաշտ<sup>4</sup>, որոնցից մեկն էլ «Հագուստ» իմաստային դաշտն է:

Գ. Զահուկյանն ամերիկացի լեզվաբան Բաքի բառարանում տեղ չգտած դերանվանական և սպասարկու բառերն ու մասնիկներն առանձնացրել է լրա-

\* Ներկայացվել է 04. IV. 2022 թ., գրախոսվել է 16. IV. 2022 թ., ընդունվել է տպագրության 24. V. 2022 թ.:

<sup>1</sup> Ըստ Հր. Աճառյանի՝ «... բնիկ հայերեն բառերի գումարը՝ որ համեմատական լեզվաբանությունը կարողացել է երևան հանել մինչև այժմ՝ իր ունեցած միջոցներով, կազմում է նախահայերեն բառապաշարի միայն մի մասը: Այդ բառերի թիվը 713 (909) է: Մնացյալը անհայտ է» (տե՛ս Աճառյան. 1940, 107):

<sup>2</sup> Սուլքիասյան. 2004, 183:

<sup>3</sup> Հղվածում Հագուստ բառը լայն իմաստով ենք գործածել. ներառել ենք նաև Հագուստի մաս, կտորեղեն նշանակություն ունեցող բառեր:

<sup>4</sup> Աճառյան. 1940, 108: Այս մասին տե՛ս նաև Աբաջյան, Դիլբարյան, Յուզբաշյան. 2017, 133, Սուլքիասյան. 2004, 185:

ցուցիչ՝ 23-րդ թեմատիկ խմբի մեջ<sup>5</sup>: Նա ներկայացրել է բնիկ հնդեվրոպական 1500 արմատ, որոնց մեջ, սակայն, հագուստ (կամ հագուստի մաս) հասկացությունն նշող բառերը քիչ են:

Հիմք ընդունելով առանձին աշխատություններ<sup>6</sup> ստորև առանձին-առանձին ներկայացնում ենք «հագուստ» իմաստային դաշտի այն բառարմատները, որոնք, ամենայն հավանականությամբ, հնդեվրոպական ծագում ունեն: Այսպես.

Ջգեստ «հագուստ»: Ջգենուկ «հագնիլ» բայից է, ըստ Հ. Աճառյանի՝ բնիկ հայերեն բառ է՝ հնդեվրոպական *ves* արմատից (ՀԱԲ, 2, 88): Գ. Զահուկյանը կատարում է ճշգրտում՝ հիմքի սկզբնաձևը վերականգնելով: Ըստ նրա՝ հնդեվրոպական *\*ues-nu-* հիմքից՝ *\*ues-* «հագնել» ձևից է (զ- նախդիրով) (ՀՄԲ, 235):

Մի շարք բարբառներում առկա է գեստ ձևը (ՆԲ, Մշ., Խլ., Մկս.), որից էլ՝ գեստ մըղնել հարադիր բայը. հմմտ. գենալ (Ղզ., Ղրբ.) «հագնիլ, զգենուկ», որը «կարտասանուի կէնալ և զգենուկ բային արմատն է, որ հին հայերէնի մէջ աւանդուած էէ. հմմտ. գեստ, գէց, գեցուածք. բոլորն ալ նոյն արմատէն, իբր զգեստ, զգեցեալ, զգեցուածք»<sup>7</sup>:

Ջգեստ արմատից կազմվել են թավշազգեստ, լողազգեստ, գիշերազգեստ, զգեստապահարան, զգեստաձև, զգեստասեր, զգեստավոր, զգեստացու, զգեստափոխ, զգեստեղեն, զգեստիկ, բեմազգեստ, գիշերազգեստ, գինազգեստ և այլն (ԺՀԼԲԲ, 2, 25):

Շոր «շոր, հագուստ»: ՀԱԲ-ում արմատը ստուգաբանված է: Զահուկյանը քիչ հավանական է համարում հնդեվրոպական *skhor-* (s)ker- «կտրել» արմատից առաջացած լինելը: Բաղադրություններ՝ շորեթափիլ, շորեղէն, կեղտաշոր, ոտնաշոր և այլն (ՀՄԲ, 593):

Վ. Ուրիշյանը տալիս է այլ բացատրություն՝ «սարդի ոստայն», «մազ, աստառ, պատուհաններուն առջեւ անցուած մազէ հիւսուած ցանց, նախուածքներէ եւ նոյն ատեն մթեղներէ պաշտպանուելու համար», «մետաքս, մետաքսեայ լաթ» (ՎՈՒ, 2, 102):

Արդի հայերենում այս արմատից ունենք հետևյալ կազմությունները՝ շորակտոր, շորահան, շորահին, շորահոտ, շորաձևանք, շորացու, շորափոխ, բարուրաշոր, գլխաշոր և այլն:

Գաբ «հագուստ, զգեստ»<sup>8</sup>: ՀԱԲ-ում բառի ստուգաբանությունը չկա: Հ. Աճառյանը միայն նշում է, որ այս արմատն առանձին անգործածական է, որից կազմվել է գաբեղէն բառը՝ «բաղէն, վերարկու» իմաստով (ՀԱԲ, 1, 495): Նույն իմաստով գաբեղէն արմատն արձանագրված է ՆՀԲ-ում: Ըստ Գ. Զահուկյանի՝ գաբ-ը «թերևս բնիկ հնդեվրոպական բառ» է, որը ծագել է *\*uebh-* «հյուսել,

<sup>5</sup> Զահուկյան. 1987, 206:

<sup>6</sup> Բառերի ստուգաբանությունները ներկայացրել ենք՝ հիմնվելով հետևյալ աշխատությունների վրա. Աճառյան. 1971, 1973, 1977, 1979, Զահուկյան. 2010, Աղայան. 1974, Ուրիշյան. 1995, 1998:

<sup>7</sup> Աճառյան. 1913, 223–224:

<sup>8</sup> Այս բառն ունի նաև համանուններ՝ 1. գաբ «խաշնդեղ», 2. գաբ «կեռ, ճանկ» և 3. գաբ «հագուստ, զգեստ» (ՀՄԲ, 143):

գործել» արմատից (ՀՄԲ, 143): Վ. Ուրիշյանի բառարանում գաբ արմատը բացատրվում է «դիմացը բաց, եկեղեցական շուրջառի նմանող վերարկու» իմաստով (ՎՈԻ, 1, 52): Նշենք, որ գաբեղեն-ն արդի գրական հայերենում չի գործածվում, իսկ գաբ արմատի եռանդամ համանունային շարքից վկայված են միայն երկուսը, բացի մեզ հետաքրքրող բառարմատից:

Ուստիկ «կտոր. հագուստ» (°): ՆՀԲ-ում բառի բացատրությունը տրվում է՝ «թերևս որպես զգեստ, զգեստիկ» (ՆՀԲ, 2, 557): Ըստ Հ. Աճառյանի՝ անստույգ բառ է, որը մեկ անգամ հանդիպում է հետևյալ նախադասության մեջ. «Մետաքս ոսկեզօղ, սպիտակ բեհեզ, ուստիկ ծանրագին էած ի վերայ նորա (Ոսկիի)» (ՀԱԲ, 3, 611): Ըստ Գ. Զահուկյանի՝ կասկածելի է «կտոր. հագուստ» նշանակությունը, սակայն հավանական է բառի բնիկ հնդեվրոպական ծագումը՝ \*us-ti-s- ձայնդարձային ձևից՝ \*ues-ti-s «հագուստ» արմատից (\*ues «հագցնել») (ՀՄԲ, 752):

«Տարբերվող նշան, զարդ» իմաստով հանդիպում ենք Վ. Ուրիշյանի բառարանում (ՎՈԻ, 2, 115):

Այս արմատն արձանագրված չէ արդի բառարաններում:

Ագ (անիլ) «հագնել»: Բնիկ հնդեվրոպական՝ \*ou (\*eu- «հագնել») արմատից է: Այստեղից՝ ագոյցք<sup>9</sup>, ագուցիկ, ագանելիք. ավելի ուշ՝ հնախահնչյունով հագանիլ > հագնիլ, հագնել, որոնցից էլ հագուստ, հագուստեղեն և այլն (ՀՄԲ, 20): Այս արմատից է կազմվել նաև յագչիլ «լավ նստել (զգեստի մասին), կպչել, փակչել» բնիկ հայերեն բառը (ՀՄԲ, 545):

Ըստ Հ. Աճառյանի՝ ագանիմ «հագնիլ» բառը բնիկ հնդեվրոպական \*évō կամ \*óvō (և ոչ ávō) արմատից է, որից էլ հնախահնչյունով հագանիլ (հագնուիլ, հագնուած, արևմտ.՝ հագուիլ, հագուած և այլն): Հիշենք նաև հագի «հագած» ձևը, որը հիմնականում գործածվում է դիմորոշ հոդով, ինչպես՝ հագիս շորերը, շորս հագիս է, հագիդ ի՞նչ է, շորերը հագին և այլն (տե՛ս ՀԱԲ, 1, 75):

Բարբառներում այս արմատից առկա են հետևյալ կազմությունները՝ հագնիլ, հագուեցնել, հագուիլ (Պլ.), հագուիլ-կապուիլ, հագուիլ-սբուիլ (Խրբ., Պլ.), հագուկ, հագուկ-սբուկ (Արճ., Մշ.), հագուն (Հմշ.) «հագնելիք», հագվտիլ (Արբ., Պլ.) «զանազան բաներ հագնիլ», հագվտուք (Պլ.) «զանազան բաներ հագնելու գործողությունը» և այլն (ՀԳԲ):

Գած (գ-գած) «հագնվելը, համակվելը»: Բնիկ հնդեվրոպական բառ է \*ueg-՝ \*ueg- «հյուսել, գործել» արմատից (ՀՄԲ, 145). հմմտ. լատ. velo «ծածկել, պատել, փաթաթել մի բանով, փաթաթել-կապել», գերմ.՝ wickeln «պատել, փաթաթել» և այլն<sup>10</sup>: Թերևս այստեղից էլ ենթադրվում է, որ գած արմատը պետք է նշանակած լինի «պատել, փաթաթել», որից էլ ինքնին զարգացել են հագնել, վրան առնել և փխբ. համակվել իմաստները<sup>11</sup>:

<sup>9</sup> Հինհայերենյան շրջանի գործերում արձանագրված բառերը բերում ենք հին ուղղագրությամբ, իսկ աշխարհաբարյան փուլում գործածվածները՝ նոր ուղղագրությամբ:

<sup>10</sup> Այս մասին տե՛ս Ա Ղ ա յ ա ն. 1974, 48–50:

<sup>11</sup> Ա Ղ ա յ ա ն. 1974, 48–50:

Գած արմատն առանձին անգործածական է: Զ նախդիր<sup>12</sup> գած արմատից ունենք զգածիլ բայը (զգածել//զգածնուլ)՝ «հագնել, իր մեջ կրել, համակվել, զբաղվել», ինչպես նաև սզազգած, սևազգած, զգածումն և այլն (ԳԲ):

Գած արմատից ունենք նաև առիգած բառը՝ «դենջակ, գոգնոց» իմաստով (ՀԱԲ, 1, 258) կամ՝ «1. մերկ մարմնի վրայ գցուած շորի կտոր, ծածկոյթ, սփածանելիք, 2. մերկ մարմնի ծածկոյթ մէջքից դէպի ցած, գոգնոց» (ԳԲ, 1, 181), ինչպես՝ «Մեղեսիկի փոշի մշուշն ըլլամ ըսփյուռ, և առիգածն արծաթ ջուրին վրա հոլանի (ՄՄ)» (տե՛ս ԺՀԼԲԲ, 1, 179):

Այլ կարգի հագուստների բնիկ հայերեն անվանումներ

Գրգլի (գրջլի) «հին, մաշված շոր, զգեստ, ցնցոտի, քուրջ»: Ըստ Գ. Զահուկյանի՝ բնիկ հնդեվրոպական բառ է՝ \*uer-՝ \*uer-k- «պատռել, ճանկոել, քերծել» արմատից (ՀՍԲ, 176): Այս բառը վկայված է նաև «նման կտորներու կամ կարկտաններու» իմաստով (ՎՈՒ, 1, 64):

Այս արմատից կազմվել են գրգլեակ (գլգլեկ) «հանդերձ աղքատի հին և գծուծ, կարկատուն, պատառոտեալ. կապերտ» (ՆՀԲ, 1, 586), գլգլայ, գլգլէն, ինչպես նաև՝ բրբ. գլգլիլ «հագուստի մաշուիլ, կտրտուիլ, քուրջ դառնալը» (ՀԱԲ, 1, 605):

Արդեն հնացած գրգլի/գրգլյակ («հնոտիք, ցնցոտի») տարբերակները արդի հայերենում գործածվում են հիմնականում գեղարվեստական գրականության մեջ, ինչպես՝ «Իշխանազն մարդուն անվայել է կեղծավորության գրգլյակներով ծածկվելը» (Մ) կամ «Կը կանգնեք սև ու գրգլյակ, նա գուլթ ունեք, ոչ քսակ» (ՊԴ) (տե՛ս ԺՀԼԲԲ, 1, 450):

Թամբատ (թմբատ) «ցնցոտի, քուրջ»: Բառի ծագումն անհայտ է (ՀՍԲ, 257): Այս արմատից ունենք թամբատեակ/թամբատոց բառաձևերը՝ «ցնցոտի, ձորձ, քուրջ, չուլ, շատ կարճ և հասարակ զգեստ» իմաստով (ԳԲ, 1, 478): ՆՀԲ-ը ենթադրում է «մինչև ազդրերը հասնող հագուստ»՝ նկատի ունենալով թամբ բառի նաև «ազդր» իմաստը<sup>12</sup>, ինչպես՝ «գրգլեակ. զգեստիկ. հանդերձիկ. քուրձ. անարգ հանդերձ որպէս թամբ արկեալ զանձամբ. կամ ծածկոյթ մինչև ի թամբն» (ՆՀԲ, 1, 749): Այսպիսով թամբ-հատեակ՝ «թամբից կամ ազդերաց վրայ կտրուած՝ շատ կարճ հանդերձ» (ՀԱԲ, 2, 149): Նկատենք, որ Հ. Աճառյանն այս բառերի (նաև թամբ բառի) ստուգաբանությունը չի անդրադարձել:

Ըստ Գ. Զահուկյանի՝ թամբ-ը հնդեվրոպական ծագում ունի:

Պետք է նկատել, որ թամբատեակ/թամբատոց բառանունները (տապճակ՝ «(հզվիլ) թամբի տակից ձիու վրա փռելու գորգ, թաւիկ» իմաստով) արձանագրված են նաև ԺՀԼԲԲ-ում (4, 449). փաստորեն, «քուրջ», «ձորձ», «հագուստ» իմաստները չեն պահպանվել:

Օթոց «անկողնի ծածկոց, կապերտ» և «վերարկու, զգեստ, կրկնոց»: Օթ «հագնիլ» արմատից է, որն առանձին անգործածական է: Բնիկ հայերեն բառ է, որն առաջացել է evō, dōv «հագնիմ» բառից՝ -ti ածականով (ՀԱԲ, 4, 609):

Արդի գրական հայերենում «վերարկու, զգեստ, կրկնոց» իմաստը հնացած է համարվում, առաջնային իմաստն է՝ «բազմոց, փափուկ նստարան մի քանի հոգու համար», ապա՝ «բազմոցի՝ թախտի՝ մահճակալի ծածկոց», «հատակին

<sup>12</sup> Տե՛ս Հ ո վ հ ա ն ն ի ո յ ա ն. 2012, 34:

փոխելու կարպետ՝ գորգ, փոռ, փովածք» և այլն (ԺՀԼԲԲ, 4, 774): Այս արմատից կազմվել են՝ օթոցագործ, օթոցապատ, օթոցապատել և այլն:

Գիշտ «աբեղայական մաշկազգեստ»: Թեև ՆՀԲ-ում այս արմատն ունի «գլխարկ, որպէս զգիշերնոց. և Ագանելի աբեղայից. ի ցփսոյ կմ ի բրդէ» իմաստը (ՆՀԲ, 1, 555), սակայն ըստ Հ. Աճառյանի՝ ճիշտ է միայն «մաշկէ հագուստ» իմաստը. «... որովհետև Լամբրոնացու կրկին օրինակներում էլ այս մասին է խօսքը» (ՀԱԲ, 1, 561): Գ. Զահուկյանը հավանական է համարում բառի բնիկ հնդեվրոպական լինելը՝ \*uēs-kh-ti-՝ \*ues- «հագնել» արմատից (ՀՍԲ, 162): Ըստ Ստ. Մալխասյանցի՝ անատոլյգ բառ է, ունի «մաշկէ հագուստ» նշանակությունը (ՀԲԲ, 1, 439):

Արդի գրական հայերենում («մորթե գլխարկ» իմաստով) գիշտ արմատն ունի հազվադեպ գործածություն. այսպես. «Մորթը ձգեց թիկունքին, գլխով վրան՝ գիշտ ու խալամ (ԱԻ)» (ԺՀԼԲԲ, 1, 404): Այս արմատից է կազմվել գլտիլ բայը, որն ունի «մաշկեղէն հագուստ հագնիլ, աբեղայ դառնալ» իմաստը (ՀԱԲ, 1, 561):

Գլխանոց հասկացությունն արտահայտող բնիկ հայերեն բառերից է.

Տեո «շղարշ, քող»: Հ. Աճառյանը և Գ. Զահուկյանը բառի սկզբնաղբյուրն են համարում հնդեվրոպական \*der-s- «քերթել, ճեղքել» արմատը. հմմտ. հուն. δέρος «կաշի» (ՀՍԲ, 727, ՀԱԲ, 4, 395, տե՛ս նաև ԲՍՀ, 149):

Հանդիպում ենք նաև «մերկ, մերկանալ», «հագուստը սոթթել-հանել մէջինը առնելու համար, նման առաջակներուն», «մորթագերծ ընել», «գրահ, որ նախապէս հաստ կ'աշիէ կ'ըլլար» իմաստներով (ՎՈՒ, 2, 201):

Տեո արմատից կազմվել են տեռակալ, շղա(ր)չատեռ, խլատեռ և այլն:

Արդի գրական արևելահայերենում այս արմատը չի պահպանվել (բարբառներում այլ իմաստ ունի), բայց արևմտահայերենում գործածվում է (նույնիսկ համանուններով), որից էլ՝ տեռազգեստ «լողազգեստ» (տե՛ս ԱԱՆԲ, 346):

Ոտնաման հասկացությունն նշող բնիկ հայերեն բառեր

Աւր/աւթ>ող «կոշիկ, ոտնաման»: ՆՀԲ-ում բառն ունի «ագանելիք ոտից մորթեղէն. կօշիկ. հողաթափ. տրեխ. մոյկ. մուճակ. սանդալ» և այլ իմաստները (2, 1022): Այն հնդեվրոպական \*ou-dh-՝ \*eu- «հագնել» արմատից է՝ \*-dh- ածականով (ՀՍԲ, 100): Այս բառից կազմվել են օղաձևություն «կոշկա-կարություն», օղագործ «կոշկակար», օղափառ «կոշիկի կաշի» բաղադրությունները (տե՛ս ՀԱԲ, 4, 607), որոնք, սակայն, չեն անցել արդի գրական հայերենին:

Ոլոգ «երկար գուլպա»: Ինչպես Հ. Աճառյանը, այնպես էլ Գ. Զահուկյանը կարծում է՝ այն, հավանաբար, նույն ոլոք «սրունք» բառն է, որը ծագել է բնիկ հնդեվրոպական \*oleq- «ծռել, թեքել» արմատից (ՀՍԲ, 600):

ՆՀԲ-ը բացատրում է «սրունք և կարթք ոտից՝ ի ծնագաց ցկրունկա» (ՆՀԲ, 2, 505):

Ստ. Մալխասյանցի բառարանում բառը բազմիմաստ է. հինհայերենյան իմաստը դարձել է երկրորդ իմաստ՝ «1. ոլոք, 2. երկայն ճիւղով գուլպայ (որ ծածկում է ոլոգները)» (ՀԲԲ, 3, 552): Նույն նշանակություններով բառը պահպանվել է գրական արևմտահայերենում (ԱԱՆԲ, 280), իսկ արդի գրական

արեւելահայերենում ունի միայն «սրունքի ոսկորը ծնկից մինչև ոտնաթաթը» նշանակությունը (ԺՀԼԲԲ, 4, 98):

Հետևելով «Հյուսիսային բառերի փաթեթին»: Բնիկ հնդեվրոպական \*per- «բուրդ գզել, պոկել» արմատից. հմմտ. հայ. սար «բուրդ» (ՀՍԲ, 457): Ըստ Հ. Աճառյանի՝ «առաջաստի կապ կամ չուան» և «խսիր կամ նիւթ ոտքին փաթաթելու համար» (ՀԱԲ, 3, 82), իսկ ըստ ՆՀԲ-ի՝ «հիւսք. հիւսկէն իրք. չուան հիւսեալ», «խրացք» (ՆՀԲ, 2, 89):

Հետևելով արմատից է հետևել բարբառային (Ար. (Լ) Ղրբ.) բառը՝ «տղամարդկանց սրունքները փաթաթելու երկար երիզավոր կտոր, սոնապան, զանգապան» (ՀԼԲԲ, 3, 274): Էդ. Աղայանն այն բացատրում է՝ «1. ոտքի փաթաթան, 2. բրդե հաստ և տաք հագնելիք, որ հագցնում են ոտքին՝ կոճերից մինչև ծունկը (գետրի)» (ԱՀԲԲ, 861):

Հագուստի մաս հասկացությունն նշող բնիկ հայերեն բառեր Աւծի(ք)/օծիք «օծիք, պարանոցը կապող զգեստաշերտ»: Բառը բնիկ հնդեվրոպական \*aughiiā \*augh- «պարանոց, վիզ» արմատից է (ՀՍԲ, 102):

Օծիք բառը ՆՀԲ-ում բացատրվում է իբրև «օձաձև գալար հանդերձից ի ծագ վերին, որ պատէ գալարանոցն. վերնաբերան կամ շուրթն պատմուճանի. ժապաւէն» (2, 1026):

Հինհայերենյան իմաստը պահպանվել է նաև արդի գրական հայերենում: Օծի(ք) բառից կազմվել են՝ օծիքածալ, օծիքակալ, օծիքակար, օծիքաշոր, օծիքատակ, օծիքադրամ:

Հուռն «քղանցք» (ՀԱԲ, 3, 124): Գ. Զահուկյանը կասկածելի է համարում այս արմատի «քղանցք» նշանակությունը՝ նշելով. «... եթե հուռնը նշանակում է «հյուս», ապա հնարավոր է կապը յեռու «ընդելուզել» արմատի հետ, որ ծագում է հնդեվրոպական «իրար մոտ շարել, կցել» արմատից» (ՀՍԲ, 468):

Ըստ Վ. Ուրիշյանի՝ բառն ունի «կակուղցնել, կտրել, ներկել եւ շինել, ստեղծել» իմաստը, ապա ավելացնում է. «ուրեմն քղանցքի հետ կապ չունի եւ «ոսկեթելով շինուած, բանուած» ըսել է» (ՎՈՒ, 2, 19), որից էլ ունենք ոսկե-հուռ(ն), ոսկեհուռակապ, մարգարտահուռ ու այլ կապակցություններ: Բարբառներում (Հվր., Արշ.) հուռ արմատն ունի «ապարանջան» իմաստը, ինչպես՝ «Կրոնրիս հուռը օսկիյան ըի» (ՀԼԲԲ, 3, 314):

Երիզ «երկար և նեղ կտորի շերտ իբրև կապ»: Հ. Աճառյանը, որպես հնդեվրոպական նախաձև, դնում է wreig'ha արմատը, բայց wr>եր ձևափոխությունը կասկածելի է համարում: Գ. Զահուկյանը թերևս բնիկ հնդեվրոպական նախաձև է կարծում \*rei-g(ʰ)- «կապել» բայի գուգահեռ ձևը՝ rei-gʰh- արմատը (որում \*gh-ն համարում է աճական):

Ստ. Մալխասյանցի ՀԲԲ-ում բառը (իր առաջնային իմաստից բացի) ունի նաև «մեռելի պատանք» իմաստը (ՀԲԲ, 1, 585): Հետազայում այն ձեռք է բերել՝ «1. երկար և նեղ կտավի շերտ, նեղ ժապավեն, 2. ժապավենաձև կարված մետաղ, 3. կտրվածք, գիծ, 4. նեղ շարք, 5. կողեզր, գիծ, 6. փխբ. շող, նշույլ» (ԺՀԼԲԲ, 1, 580), արևմտահայերենում՝ «ձայնագրման նպատակով գործածվող մագնիսական ժապավեն՝ ձայներից» (ԱԱՆԲ, 93):

Երիզ արմատից կազմվել են երիզապատ, երիզապինդ, երիզաձև, երիզանման, երիզագոտի, երիզագարդ, երիզաթել, երիզաժապավեն և այլն:

Խրաց (սեռ. հոգն.) «կոշկաթել, բաճկոնի թել, քուղ»: Բնիկ հնդեվրոպական \*khrok- so- (°) \*(s)ker- «պտտել, ծռել» արմատից է (ՀՄԲ, 354): Այս արմատից ունենք խրացել, խրացատեսակ բաղադրությունները (ԳԲ):

Խրաց բառի հինհայերենյան իմաստը պահպանվել է նաև արդի գրական արևմտահայերենում ու արևելահայերենում՝ որպես գրքային բառ, ինչպես՝ «Նա կապում էր մագեղեն տրեխների խրացները (Բ)» (ԺՀԼԲԲ, 2, 592):

Գոտի (գաւտի) «գոտի, երկնքի գոտի, ծիածան, ծիրանի գոտի, լեռնաշղթա»: Գ. Զահուկյանը հավանական է համարում բառի հնդեվրոպական ծագումը՝ \*uābh-dē \*uebh- «հյուսել, գործել» և \*dē «կապել» (>հայ. տի) արմատներից (\*«հյուսակապ»):

Ըստ Հ. Աճառյանի՝ բառը բաղադրված է գաւ և տի «կապ» արմատներից. տի-ն հնդեվրոպական dē-«կապել» բայի արմատն է, անծանոթ է գաւ արմատը: Համեմատելով գավառական մեջկապ բառանվան հետ՝ Աճառյանը ենթադրում է, որ այն ունի «մեջք» իմաստը (ՀԱԲ, 1, 608):

Բառի ստուգաբանությունը հետազայում անդրադարձել է Էդ. Աղայանը, ըստ որի՝ նույն գաւ հնդեվրոպական արմատից է ծագում գոտի <գաւտի բառը<sup>13</sup>, որի մեջ ի-ն ածանցն է, արմատն է՝ գաւտ, որը հստակ երևում է պարեգոտ, ընդգոտել «միասին կապել» բառերում (ԲՄՀ, 49):

Գոտի արմատից գրաբարում ունենք գոտեկած «գոտի կապած», գոտեկած «գոտի կապող», գոտեկող «գոտի ունեցող, գոտի կապած», գոտեկուրել՝ «1. գոտի կապել (ուրիշին կամ ինքն իրեն), 2. փխբ. կազմ ու պատրաստ լինել, գոտեկնդուել, զորանալ, սրտապնդուել» և այլն (ԳԲ), ապա՝ գոտեկարդ, գոտեկապ, գոտեկածալ, գոտեկալ, գոտեկառակ, գոտեկատեղ, գոտեկահար, գոտեկալոր ու այլ բառեր (ԺՀԼԲԲ), բարբառներում՝ գոտիկ և այլն:

Կոճակ «գնդաձև փոքրիկ իր զգեստի համար»: Որոշ լեզվաբաններ այն կապում են պրա. gož արմատին: Հ. Աճառյանը gož և կոճակ բառերի նմանությունը պատահականություն է համարում: Գ. Զահուկյանը նշված բառի արմատը՝ կոճ, կապում է հնդեվրոպական \*goudi-, \*gouædi- նախաձևի \*geu- «ծռել, թեքել, կամար կազմել»՝ \*d ածականով արմատին (ՀՄԲ, 417):

Կտորեղեն, կարուձևի պարագաներ նշանակող բնիկ հայերեն բառեր

Ասր «բուրդ»: Բնիկ հնդեվրոպական բառ է՝ \*pok'u-՝ \*pek'u- «բուրդ, ոչխար, անասուն» (ՀՄԲ, 81): ՆՀԲ-ում այն ունի «բուրդ ոչխարաց. գեղմն, գզաթ, մանաւանդ կարեալ և մաքրեալ՝ սպիտակափայլ. որպէս և հանդերձն ասրեղէն» նշանակությունները (ՆՀԲ, 1, 333):

Բառի բուն՝ ասու արմատից կազմվել են հետևյալ բառանունները՝ ասուեայ, ասուի, ասուեղ, ասուեակ, ասուեղէն, ասր ձևից՝ ասրեայ, ասրաբեր, ասրեղեն, ասրազործ, ասրազործություն, ասրավաճառ և այլն: Պետք է նկատել, որ ասր արմատն ու դրանից բաղադրված կազմություններն այժմ հնացած են համարվում:

<sup>13</sup> Այս մասին տե՛ս նաև Ղ ա փ ա ն ց յ ա ն. 1939, 208:

Կտաւ «վուշ, վուշից պատրաստված կտոր, կտավից հագուստ, պարան, կտավեղեն»: Ըստ Հ. Աճառյանի՝ բառի ծագումն անհայտ է. «... հայերէնի հետ նմանութիւն ունեցող ձևերը մեզնից են փոխառեալ. այս իրողութեան հետ լաւ է պատշաճում այն հանգամանքը, որ կտաւի բոյսը գիտութեան մէջ համարուած է Կովկասեան ծագումից. հաւանաբար իր օրրանն է Հայաստանը» (ՀԱԲ, 2, 675): Գ. Զահուկյանը ենթադրում է, որ այն բնիկ հնդեվրոպական բառ է՝ կուտ բառից, որը տարածվել է ողջ Առաջավոր Ասիայում և եվրոպայում՝ տալով զանազան ածանցյալներ (ՀՍԲ, 432):

Այս արմատից ունենք հետևյալ կազմությունները՝ կտավազործ, կտավալաճառ, կտավյա, կտավեղեն, կտավիք, կտավաթել և այլն (ԺՀԼԲԲ):

Խաւ «շերտ, խավ, աղվամազ, բարակ մազածածկույթ, բուրդ, երիզ», ինչպես և «կերպասի վրայի բարակ թաւութիւնը»: Գ. Զահուկյանը ենթադրում է, որ բնիկ հնդեվրոպական բառ է՝ \*khəu-\*(s)keu- «ծածկել, փաթաթել» արմատից (ՀՍԲ, 323): Բարբառներում ունենք խավք (Մշ., Բղշ.) «կտորի վրայի խավը, աղվամազը», խավ (Ղբբ.) «մանած թել՝ կարպետի՝ գորգի համար»: Արդի հայերենում ունենք խավաթափ՝ «1. խավը թափված (գործվածքների մասին), 2. փխբ. հմայքը՝ փայլը կորցրած», խավալոր, խավոտ և այլն (ԺՀԼԲԲ):

Կար «թուկ, լար, հող, կցում, կար, կարելը»: Գ. Զահուկյանը հավանական է համարում բնիկ հնդեվրոպական ծագումը՝ \*goro` \*ger «միավորել, հավաքել» ձևից: Արմատը շատ մեծ զարգացում է ունեցել ցեղակից լեզուների մեջ թե՛ ձևի և թե՛ իմաստի տեսակետից՝ տալով մարմնի անդամների (մեջք, ոտք, կուռ), զանազան գործիքների ու գործողությունների (կարթ, ջուհակի հաստոց) անվանումներ (ԲՄՀ, 81): «Բառը շատ աւելի հին է քան թելը կամ ասեղը», — նշում է Վ. Ուրիշյանը և տալիս է նոր բացատրություն՝ «սպահավել, ամրացնել, հաստատել», որտեղից էլ՝ «կարող, դերձակ» իմաստները (ՎՈՒ, 1, 160):

Կար արմատից առաջացել են գլակակար, դարձակար, դիպակակար, եզրակար և այլն:

Կարծ (բբբ. կաժ, կաճ) «թելի փաթույթ, կարծ, կաժ»: Գ. Զահուկյանը ենթադրում է, որ այն բնիկ հնդեվրոպական բառ է՝ \*gr-k- «պտտել, ոլորել» արմատից (ՀՍԲ, 392): Մեկ այլ բացատրությամբ՝ «մէկ տարուան մէջ արմաւենիին տուած արմաւը, կամ ոչխարին՝ բուրդը: Բ-ն աճական է: Պարսկերէն կաժ-ը որդէն առնուածն է, որ վերադարձած է արաբերէնի ուղղագրութեամբ՝ մետաքս» (ՎՈՒ, 1, 161):

Այս արմատը «թելի կծիկ, փաթույթ» իմաստով գործածվում է արեւմտահայերենում (ԱԱՆԲ, 155), ինչպես նաև՝ բարբառներում, որից էլ՝ կարծազուկ, կարծառ, կարծառել, կարծել կազմությունները (ՀԼԲԲ, 3, 59):

Թել «թել, դերձան»: Հենվելով դանիացի անվանի լեզվաբան Ջ. Պետերսենի այն կարծիքի վրա, որ թել բառը ծագել է հնդեվրոպական tenslo- ձևից, Հ. Աճառյանը բերում է հուն. τανία «երիզ, ժապավեն», սանա. tāna- «թել, դերձան», tiñklas «ցանց» և այլն ձևերը, որոնց ծագումը հավանական է համարում հնդեվրոպական ten «լարել, քաշել» պարզ արմատի զանազան ձևափոխություններից: Հ. Աճառյանը կարծում է, որ հայերենից են փոխառնված պարսկերեն tēla «լար, առասան» և թրք. tel «1. թել, դերձան, 2. լար. թուկ,



չուան. 3. նեարդ» բառերը (ՀԱԲ, 2, 169): Թեւ արմատը ստուգաբանելիս Գ. Ջահուկյանը բերում է բնիկ հնդեվրոպական \*tek-lo` \*tek- «գործել, հյուանել» նախաձևը:

Թեւ արմատի առաջնային իմաստը պահպանվել է հայերենի բոլոր փուլերում՝ ավելանալով նոր իմաստներ. օրինակ՝ ԺՀԼԲԲ-ում արձանագրվել է շուրջ 16 իմաստ (տե՛ս ԺՀԼԲԲ, 2, 171):

Թեւ արմատից կազմվել են՝ թելակար, ժապավենաթել, մանրաթել, մետաքսաթել, ոսկեթել, պղնձաթել և այլն (ԺՀԼԲԲ):

Այս խմբում կարելի է ավելացնել նաև սանդն, հերիւն բառերը:

«Հագուստ» իմաստային դաշտում գործածվող բնիկ հայերեն բառերից են նաև՝ փերթ, բոկ (բոկոտն), մերկ, ոգումն «թեզան», կրուկն, թոռ «մախաթ, հերյուն», գերբն «սրբիչ, ջնջոց, ավել» և այլն:

Կան բնիկ հայերեն բառեր էլ, որոնք մեծ հաճախականություն ունեն «Հագուստ» իմաստային դաշտում բազմաթիվ բարդությունների ձևավորման մեջ, ինչպես՝ տուտ(ն) «ծայր, պոչ» (քղանցատուտ, երկարատուտ), եզր «եզր, սահման» (եզրակար, եզրաժապավեն, եզրագուտի, եզրագարդ), կապ «կապ, վանկ» (բերանակապ, գլխակապ, գոտեկապ, երիզակապ, ժապավենակապ, բազկապ) և այլն:

### Եզրակացություն

Այսպիսով՝ հնդեվրոպական ծագում ունեցող հագուստ կամ հագուստի մաս նշանակող բառերը թեև քիչ են (մեր հավաքած օրինակներով մոտ 3 տասնյակ), սակայն այդ շարքը համալրվել է լեզվի ներքին օրինաչափություններով կազմված բառերով (թեև դրանց մեջ կան արմատներ էլ, որոնք ենթադրաբար են բնիկ հնդեվրոպական):

Ակնհայտ է, որ արմատներից շատերը, ժառանգաբար անցնելով արդի գրական արևելահայերենին, ժամանակի ընթացքում իմաստային զգալի փոփոխությունների են ենթարկվել. ա) փոխել են իրենց առաջնային նշանակությունները, ինչպես՝ հուռն, ոլոգ, բ) բառի հիմնական, առաջնային իմաստը դարձել է ոչ հիմնական, ինչպես՝ օթոց, գ) որոշ բառեր այսօր գործածության մեծ հաճախականություն ունեն. պահպանել են իրենց առաջնային իմաստները, երբեմն ավելացել են նոր (հաճախ՝ փոխաբերական) իմաստներ, ինչպես՝ զգեստ, խավ, գոտի, կտաւ, շոր, օձիք, երիզ, թել, կար, կոճակ, դ) որոշ բառեր ունեն գործածության ոչ մեծ հաճախականություն, ինչպես՝ գիշտ, գրգլի/գրգլյակ, խրաց (գործածվում են հիմնականում գեղարվեստական գրականության մեջ):

Գրական արևմտահայերենին են անցել օդ, ասր, գոտի, գրգլի, երսանկ, կարժ, խրաց, կտաւ, հեակ, ոլոգ, երիզ, թել, կար, կոճակ, շոր, տեռ, օձիք արմատները:

Կարժ, հեակի, գրգլի, երսանկ, խավ, կարժ, կտաւ, հուռ, թել, կար, կոճակ, շոր, օձիք արմատները գործածվում են նաև բարբառներում:

Լուսինե Ղամոյան – ք. գ. Թ., ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի հայերենի բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ «Հագուստ» իմաստային դաշտի քննություն, գրական և խոսակ-

ցական լեզուների փոխհարաբերություն: Համահեղինակ է 1 գրքի, հեղինակ՝ 1 մենագրության և չուրջ 40 հոդվածի: lgamoyan@mail.ru

# ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ար. – Արարատյան  
 Արբ. – Արաբկիր  
 Արճ. – Արճեշ  
 Արշ. – Արեշ  
 արևմտ. – արևմտահայերեն  
 Բղշ. – Բաղեշ  
 Բրբ. – Բարբառային  
 Գերմ. – Գերմաներեն  
 Թրք. – Թուրքերեն  
 Լ. – Լոռի  
 Լատ. – Լատիներեն  
 Խլ. – Խլաթ  
 Խրբ. – Խարբերդ  
 Հայ. – Հայերեն  
 Հզվդ. – Հազվագեղ  
 Հմմտ. – Համեմատել  
 Հմշ. – Համշեն  
 Հոգն. – Հոգնակի  
 Հոլն. – Հոլնարեն  
 Հվր. – Հավարիկ  
 Ղզ. – Ղազարի  
 Ղրբ. – Ղարաբաղ  
 Մկս. – Մոկս  
 Մշ. – Մուշ  
 ՆԲ. – Նոր Բայազետ  
 Պլ. – Պոլիս  
 պրս. – պարսկերեն  
 սանս. – սանսկրիտերեն  
 սեռ. – սեռական  
 փխբ. – փոխաբերական  
 ԱԻ – Ավետիք Իսահակյան  
 ՄՄ – Միսաք Մեծարենց  
 Մ – Մուրացյան  
 ՊԴ – Պետրոս Դուրյան  
 Բ – Բաֆի  
 Ոսկիփ. – Գիրք, որ կոչի Ոսկեփորիկ, արարեալ Ս... Գրիգորի Տաթևացույն.  
 Պոլիս, ՌճՂԵ

# ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՆԲ – Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան  
 ԱՀԲԲ – Արդի հայերենի բացատրական բառարան

ԲՍՀ – Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ  
 ԳԲ – Գրաբարի բառարան  
 ԺՀԼԲԲ – Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան  
 ՀԱԲ – Հայերեն արմատական բառարան  
 ՀԲԲ – Հայերեն բացատրական բառարան  
 ՀԳԲ – Հայերեն գաւառական բառարան  
 ՀԼԲԲ – Հայոց լեզվի բարբառային բառարան  
 ՀՍԲ – Հայերեն ստուգաբանական բառարան  
 ՆՀԲ – Նոր բառգիրք հայկազեան լեզուի  
 ՎՈՒ – Մեր արմատները նոր լոյսի տակ

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Աբաջյան Ա., Դիլբարյան Ն., Յուզբաշյան Ա. 2017, Հայոց լեզվի պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 442 էջ:
- Աղայան Էդ. 1974, Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 167 էջ:
- Աղայան Էդ. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1642 էջ:
- Աճառեան Հր. 1913, Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, Լազարեան ձեռնարան արեւելեան լեզուաց, 1143 էջ:
- Աճառյան Հր. 1940, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, Երևան, Պետական համալս. հրատ., 355 էջ:
- Աճառյան Հր. 1971, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, Երևանի համալս. հրատ., 698 էջ, 1973, հ. Բ, Երևան, Երևանի համալս. հրատ., 687 էջ, 1977, հ. Գ, Երևան, Երևանի համալս. հրատ., 635 էջ, 1979, հ. Դ, Երևան, Երևանի համալս. հրատ., 674 էջ:
- Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ. 1979, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Վենետիկ, «Ի Սրբոյն Ղազարու», 1140 էջ, 1981, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, «Ի Սրբոյն Ղազարու», 1067 էջ:
- Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան. 1969, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 601 էջ, 1972, հ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 714 էջ, 1974, հ. 3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 574 էջ, 1980, հ. 4, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 828 էջ:
- Համբարձումյան Վ. 2012, Հայերենի բառաքնական և ստուգաբանական ուսումնասիրություններ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 223 էջ:
- Հայոց լեզվի բարբառային բառարան. 2001, հ. 1, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 427 էջ, 2002, հ. 2, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 431 էջ, 2004, հ. 3, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 425 էջ:
- Հովհաննիսյան Լ. 2012, Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն, 2-րդ մաս, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 180 էջ:
- Ղազարեան Ռ. 2000, Գրաբարի բառարան, հ. 1, Երեւան, ԵՊՀ հրատ., 683 էջ, 2000, հ. 2, Երեւան, ԵՊՀ հրատ., 657 էջ:
- Ղափանցյան Գր. 1939, Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, Երևան, Պետհամալս. հրատ., 351 էջ:
- Մալխասեանց Ստ. 1944, Հայերեն բացատրական բառարան, հ. 1, Երևան, ՀՍՍՌ Պետհրատ, 608 էջ, 1944, հ. 2, Երևան, ՀՍՍՌ Պետհրատ, 512 էջ, 1944, հ. 3, Երևան, ՀՍՍՌ Պետհրատ, 614 էջ, 1945, հ. 4, Երևան, ՀՍՍՌ Պետհրատ, 646 էջ:

Մարգարյան Ռ. 2019, Ժամանակակից հայերենի հագուստ անվանող բառերի ծագումնաբանական և պատմական շերտերը. – «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետ. լեզվահասարակագիտական համալսարանի», № 1, էջ 84–96:

Ուրիշյան Վ. 1995, Մեր արմատները նոր լոյսի տակ, հ. 1, Լոս Անճելես, «Մեշագ» հրատ., 184 էջ, 1998, հ. 2, Լոս Անճելես, «Մեշագ» հրատ., 241 էջ:

Ջահուկյան Գ. 1987, Հայոց լեզվի պատմություն (նախագրային ժամանակաշրջան), Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 747 էջ:

Ջահուկյան Գ. 2010, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, «Ասողիկ» հրատ., 819 էջ:

Սաքապետոյեան Ռ. 2011, Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Երեւան, «Տիգրան Մեծ» հրատ., 382 էջ:

Սուքիասյան Ա. 2004, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, Երևանի համալս. հրատ., 352 էջ:

## ИСКОННО АРМЯНСКИЕ СЛОВА В СЕМАНТИЧЕСКОМ ПОЛЕ «ОДЕЖДА»

ЛУСИНЕ ГАМОЯН

### Резюме

*Ключевые слова: одежда, семантическое поле, исконно армянские слова, индоевропейский родной язык, корень.*

Из древнеармянского до нас дошло небольшое количество коренных индоевропейских названий, обозначающих одежду или часть одежды (по собранным нами образцам, около 3 десятков). Некоторые из них перешли из древнеармянского, среднеармянского и из диалектов в современный литературный армянский язык, хотя следует отметить, что некоторые из этих слов, предположительно, исконно индоевропейские. Многие из корней со временем подверглись значительным семантическим изменениям: а) изменили свои первичные значения, как *huren*, *volog*; б) основной, первичный смысл слова стал неосновным, как *otots*; в) некоторые ключевые слова имели большую частоту использования, сохранили свои первичные значения, иногда приобрели новые (часто переносные) значения, как *zgest*, *khav*, *goti*, *ktav*, *shor*, *odziq*, *eriz*, *tel*, *kar*, *kojak*; г) некоторые ключевые слова имеют небольшую частоту использования, например, *gisht*, *grgli*/*grglyak*, *khrac* (используются в основном в художественной литературе). В литературный заподноармянский язык перешли корни *od*, *asr*, *goti*, *grgli*, *ersank*, *karzh*, *kh rats*, *ktav*, *hesk*, *volog*, *eriz*, *tel*, *kar*, *kojak*, *shor*, *ter*, *odziq* (корни *ag*, *gads* используются в словообразовании). Корни *karzh*, *heski*, *grgli*, *ersank*, *khav*, *kar*, *ktav*, *hur*, *tel*, *kar*, *kojak*, *shor*, *odziq* употребляются также в диалектах. Со временем от исконно армянских названий одежды образовалось множество производных и сложных слов.

*Լусине Гамоян – к. филол. н., старший научный сотрудник отдела современного армянского языка Института языка им. Г. Ачаряна НАН РА. Научные интересы: исследование семантического поля «одежда», взаимоотношения литературного и разговорного языков. Соавтор 1 книги, автор 1 монографии и около 40 статей. lgamoyan@mail.ru*

## NATIVE ARMENIAN WORDS IN THE SEMANTIC FIELD OF “CLOTHING”

LUSINE GHAMOYAN

### Summary

*Key words: clothes, semantic field, native Armenian words, Proto-Indo-European Language, root.*

From Old Armenian a small number of indigenous Indo-European names denoting clothing or apparel have come down to us (according to the samples we have collected, about 3 dozens). Some of them have passed from Old Armenian, Middle Armenian and from dialects to modern literary Armenian: although it should be noted that some of these words are presumably native Indo-European. Many of the roots have undergone significant semantic changes over time: a) changed their primary meanings; as [*huren, volog*], b) the basic, primary meaning of the word became non-mainstream; as [*otots*], c) some keywords had a high frequency of use, retained their primary meanings, sometimes acquired new (often figurative) meanings, as [*zgest, khav, goti, ktav, shor, odziq, eriz, tel, kar, kojak*], d) some keywords have a small frequency of use; for example [*gisht, grgli/grglyak, khrac*] (used mainly in fiction). The roots [*od, asr, goti, grgli, ersank, karzh, khrats, ktav, hesk, volog, eriz, tel, kar, kojak, shor, ter, odziq*] (roots [*ag, gads*] are used in word formation) have passed into literary Western Armenian. The roots [*karzh, heski, grgli, ersank, khav, kar, ktav, hur, tel, kar, kojak, shor, odziq*] are also used in dialects. Over time, many derivatives and compound words were formed from the names of native Armenian clothes.

*Lusine Ghamoyan – Candidate of Sciences in Philology, Senior Researcher at the NAS RA Institute of Language after H. Acharyan. Scientific interests: semantic field of “clothing”, the relationship between literary and spoken languages, incorrect grammar. Co-author of 1 book, author of 1 monograph and over 40 articles. lgamoyan@mail.ru*